


## General Service of the YSMU

---

**От:** Yerevan State Medical University <info@ysmu.am>  
**Отправлено:** 3 апреля 2019 г. 11:13  
**Кому:** genserv@ysmu.am  
**Тема:** FW: ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ  
**Вложения:** շնորհակալագիր.docx

**From:** Армине Шумович [mailto:armine-21@mail.ru]  
**Sent:** Wednesday, April 3, 2019 9:27 AM  
**To:** info@ysmu.am; klinika225@yandex.ru  
**Cc:** press@ysmu.am  
**Subject:** ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

С уважением !  
Армине Шумович



**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Ռեկտոր՝ Արմեն Մուրադյանին  
Կրկնօրինակը՝ Մանկական ստոմատոլոգիայի և  
օրթոդոնտիայի ամբիոնի վարիչ՝ Հրանտ Տեր-Պողոսյանին

Քաղաքացի՝ Արմինե Շումովիչից  
Հասցե՝ ք. Երևան, Ա. Ավետիսյան 25/58

**ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ**

Հարգելի պարոն Մուրադյան.

Մեր ընտանիքի անունից հայտնում եմ Ձեզ մեր խորին ու անկեղծ շնորհակալությունը, Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկայի երիտասարդ և միևնույն ժամանակ արհեստավարժ ու հմուտ օրդինատոր՝ Մանե Կարապետյանի համար:

Մեզ՝ ծնողներին համար չափազանց կարևոր էր, որ մեր 4 տարեկան բալիկի կյանքում առաջին այցն ատամնաբուժարան լինի ուրախ և անվախ մթնոլորտում: Մանեն նախ կարողացավ սեր ու մտերմություն ցուցաբերել երեխային: Իր համբերատար ու բարի վարքով բժշկուհին հարթեց այն բոլոր վախերը, որոնք սովորաբար լինում են երեխաների մոտ բժիշկների հանդեպ:

Մասնագիտությամբ իրավաբան լինելով ու աշխատելով կառավարության աշխատակազմում, միևնույն ժամանակ, չեմ ցանկանում չկիսվել անձամբ իմ ուրախությամբ և հաճելի զարմանքով, քանի որ անշահախնդիր ու բարեհամբույր վերաբերմունքը մեր օրերում հազվադեպ հատկանիշներ են, այն էլ անվճար բժշկական ծառայությունների մատուցման բնագավառում:

Եվս մեկ անգամ շնորհակալություն և պտղաբեր ընթացք նման բժիշկների:

Արմինե Շումովիչ 03.04.2019թ.